

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Դ. Շրջան

1900 Փետրուար 19

Թիւ 83 — Ժ

هائراکيداق غزوة تهی

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արսասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յիսնամեակը (ոսանաւոր)
Շաբաթական Բրոնիկ
Այլիոն կը խայտայ
Բուր—Ազգար (բարեկենդանի նորավեպ)
Պրիւնիդիէնի ճառը
Արցունքին մէջ (Չայնեակ)
Պիսանի խրատներ
Իմաստասիրական բառարան
Ներագործութիւն
Պիսանի խրատներ
Քիչ մը խնդուք
Լեզուախոս

ՄԵԼԻՔՈՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Բ. Պ.
Բ. Պ.
Թ. ԼԱՊԺՆՃԵԱՆ
Ն. ԳՕԼԱՆՃԵԱՆ
»

Ա. Լ.
Բ. Պ.

40 փարա 40

ՀԱՆՐԱՊԵՏԱԿ կը ծախուի. 1. Գասըգիւղ, Արմեն ԷՖ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մաքիա, Կայարանին մօտ, ծխալանառ Յարութիւն Աղա Էժմեհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավանառ Նեան աղա Օզունեանի բով (նախկին ջրավանառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավանառ Ստեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալենց,
Աւենեան եւ Զարդարեան գրատուններ. — 6. Բոլոր լրագրավանառներուն բով:
Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՊԵՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեանս դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապթիէ հասցեսի Թիւ 61

1900

THE JOURNAL OF THE

AMERICAN MEDICAL ASSOCIATION

PUBLISHED WEEKLY

CHICAGO, ILL., U.S.A.

Subscription price, Five Dollars per Annum in Advance

Entered as Second-Class Matter, May 2, 1879, under Post Office No. 383, at Chicago, Ill., under special rate of Post Office Department. Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 16, 1918. Postage paid at Chicago, Ill., and at additional mailing offices. Postmaster: Send address changes in this journal to THE JOURNAL OF THE AMERICAN MEDICAL ASSOCIATION, 535 North Dearborn Street, Chicago 10, Ill.

Volume 40

Number 10
October 1, 1918
Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago 10, Ill.
Subscription price, Five Dollars per Annum in Advance
Entered as Second-Class Matter, May 2, 1879, under Post Office No. 383, at Chicago, Ill., under special rate of Post Office Department. Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 16, 1918. Postage paid at Chicago, Ill., and at additional mailing offices. Postmaster: Send address changes in this journal to THE JOURNAL OF THE AMERICAN MEDICAL ASSOCIATION, 535 North Dearborn Street, Chicago 10, Ill.

October 1, 1918

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago 10, Ill.
Subscription price, Five Dollars per Annum in Advance
Entered as Second-Class Matter, May 2, 1879, under Post Office No. 383, at Chicago, Ill., under special rate of Post Office Department. Accepted for mailing at special rate of postage provided for in Act of October 3, 1917, authorized on July 16, 1918. Postage paid at Chicago, Ill., and at additional mailing offices. Postmaster: Send address changes in this journal to THE JOURNAL OF THE AMERICAN MEDICAL ASSOCIATION, 535 North Dearborn Street, Chicago 10, Ill.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street, Chicago 10, Ill.

Subscription price, Five Dollars per Annum in Advance

1918

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, գրական եւ Բաղաճական



ԽՄԲԱԳԻՐ — ՏՆՕՐԷՆ

ԻԿԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Փետրուար 19

Թիւ 83 — Շ

ՅԻՍՆԱՄԵԱԿԸ

ՎԱՐՊՈՏԻՆՆԵՐ

Տ. Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

Չայներ անհո՛ւն բարձրանան աչէն, ձախէն, բոլորէ՛ն
Ուր կը սիրեն յարգանքով, հիացող են, Վարպէս, Ձե՛զ,
Շուրջդ ներբողներ երփներփեան հոխ դրուազ մը յօրհենն,
Հոսոսելու համար զայնս փութա քաղել, փութապէ՛ս :

Փեր տանան՝ վիշտը լուռ՝ ցաւը փութով կ'առնէ քայլ,
Լոկ Անո՛ւնը կը մընայ կըրկէսին մէջ յաղթութեան,
Հանդիսականք կը հոխքեն ծափեր սրանց ու մըռայլ
Պատէ սլահ մ'անցեալին վրայ՝ շնորհիւ այժմու եռանդեան:

Նո՛ր գարուն գերդ խրնկասփիւռ, եւ արեալո՛յս վարդամաս,
Ուրա՛խ եղիւ ծաղկանց մէջ, գեփիւռին շունչն ալ նակսիդ
Թո՛ղ սուրայ հեզ, ու ծածկէ դէմէ՛դ ցաւին խորամաս:

Մի՛րս՝ ըզգայուն ծերունոյ, հոգի՛ վըսեմ ու աննառ .
Յընծա՛ այսօր, զի ահա՛ տոնի զարժանքն փառսիդ .
— Ընդունէ՛ իմ ալ խորո՛ւնկ յարգանքս, ո՛վ Յոբէլեար:

Պարտիզակ
17 Հոկտեմբեր 99

ՄԵԼԲՈՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՃԱԲԱԹԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ



ԱՐԵՎԵՆԴԱՆԻ այս
յնժոռն շարթուման
մէջ, մինչ կրօն ժո-
ղովն անդամ, աշ-
խարհական ժողո-
վոց հետ, պահ մը
աբեղաթողի հանգիստ առնելու իրա-
ւունք ունի, դառն զուգադիպութեամբ
մը կարինէն սրտածմիկ լուր մը կը հասնի
վրդովելու, չե՛նք ըսեր կրօնականներու
հոգին, այլ գէթ աշխարհականներու
սիրտը, այսինքն ամէն անոնց որ դառն
տիրութեամբ կը գիտեն ոեւէ դաւա-
նափոխական աննպատակ շարժում որ
յերեւան կուգայ ազգին այս կամ այն
զանգուածին մէջ՝ Կարնոյ զանազան գիւ-
ղերուն, ինչպէս նաեւ Բասէնի եւ Պա-
յաղիտի դաշտերուն աւաններուն մէջ,
դաւանափոխական անօրինակ շարժում
մը սկսեր է, եւ տղէտ գիւղացիք խումբ
խումբ կը յարին եղեր օրթօտօքս դաւա-
նութեան, լուր մը զոր լրագիրք շար-
թումս պաղ սրտով արձանագրեցին ա-
ռանց ոեւէ խորհրդածութեան, մինչ-
դեռ սնոտի վիճաբանութեան մ'առթիւ
զոր լաւագոյն դատի մ'արժանի ոգեւո-
րութեամբ մղեցին, թէեւ անոր շարժա-
ռիթը մօտեղ մ'անգամ չ'արժէր, մինչեւ
անգամ դրամական գրաւներ առաջար-
կելու չափ առաջ գացին, երկու մրոտ
ու մրճոտ խալկիններու առածն յիշե-
ցնելով մեզ անգամ մ'ալ։ Եթէ զանա-
զան թագուն ճշմարտութիւններ յերե-
ւան հանելու համար, ընդունուած սո-
վորութիւն մ'ըլլար գրաւ բռնելու գրու-
թիւնը, բնաւ տարակոյս չունինք թէ
անոր հեղինակն իր առաջարկած գու-
մարը հնգիցս բաղմոսպատկելու հարկին

տակ պիտի մնար, իր պարտքին կողմը
գրելու պայմանաւ, վասն զի լոկ ազգա-
յին հիւանդանոցի որբերուն շահեցնելու
նպատակաւ, մանաւանդ սա՛ ուրախու-
թեան որքան գթութեան շարթուման
մէջ, մեք ալ պիտի փորձուէինք նեւ-
ուած ձեռնոցը վերցնել, եւ քանի մը
գրաւներ առաջարկել աւելի շահեկան,
աւելի կենսական ճշմարտութիւններ յե-
րեւան հանելու, եւ մանաւանդ հասկը-
ցնելու համար թէ հանրային կարծիք
ըսուածը, ողջմտութիւնը իր կարծածին
չափ դիւրաթեք քամակ չունի։

Դառնալով Կարնոյ նահանգին մէջ ե-
րեւան ելած դաւանափոխական շարժ-
ման, այս լուրը տուող թղթակիցը եր-
բեք չի յայտնէր անոր շարժառիթը,
միայն կ'ըսէ թէ «անշուշտ առաջնորդը
գրած ըլլալու է Պատրիարքարան»։ Գրեւն
ի՛նչ օգուտ ունի, եթէ լոկ գրելով շա-
տացեր է ի՛նչ տնօրինութիւն ըրեր է այդ
շարժումն արգելելու համար, եւ կամ
Պատրիարքարանն ի՛նչ միջոցներ տնօրի-
նած է, ա՛յս է գիտնալու կարեւոր կէտը։
Մեք միշտ ամենադառն մօրմօքով կը
տեսնենք ոեւէ դաւանափոխական շար-
ժում, որոյ խայծը կը կազմեն օտար կրօ-
նածաւալ առաքելութեանց խոստում-
ները, որք գիտեն ամէն պարա-
գաններէ օգուտ քաղել, ժողովրդեան
նեղութենէն, իր առաջնորդին կամ հով-
ունին դէմ զգացած վաղանցիկ սրտնե-
ղութենէն, այլովքն հանդերձ, իրենց
փարախը որսալու համար տղէտ ժողո-
վուրդը, տղէտ՝ իր հոգեւոր անխնամ
վիճակին համար, տղէտ՝ իր տղէտ քա-
հանաներուն պէս եւ արժանի։ Եկեղե-
ցական իշխանութիւնը երբեք բան մը չէ
ըրած գիւղացի ժողովուրդին, անոր
պապենական հաւատքն ամրապնդելու,
արծարծելու համար. դաւառները գա-
ցող առաջնորդները, իրենց պաշտօ-
նին խախուտ հանգամանքին կար-
ծես իրազեկ, լոկ իրենց ժամուցները

հաւաքելու ետեւէ եղած են, ժողովուրդին օգտին համար առանց արմատական բան մը ընելու կամ գէթ մտքէ անցընելու: Տարիներէ ի վեր անխնամ թողուած ժողովուրդ մը ասկէ տարբեր վիճակ մը չէր կրնար ունենալ, որ անարդարանալի անհոգութեան մը դառն հետեւանքն է:

Այս կրօնափոխական շարժմանց հանդէպ, մեր Պատրիարքարանի զգացած հոգն եթէ առաջ մէկ էր, հիմակ երկուք եղաւ, որովհետեւ բողոքականութեան եւ կաթողիկոսութեան վրայ այժմ օրթոտոքսութիւն մ'ալ աւելցաւ, որոյ նշանակութիւնը բացատրել աւելորդ է: Բայց այս հոգեբուն յաւելման հետ, Պատրիարքարանն ինչ միջոցներ խորհած է կամ կը խորհի, ատիկա չենք գիտեր, սա միայն գիտենք թէ ամէն անգամ որ Հայ Եկեղեցւոյ ծոցէն անհատ մը կը պակսի կամ համոզմամբ, եւ կամ հարիւրին իննսունեւինն նիւթական բարեկեցութեան եւ գիւրութեան հրապուրիչ խոստմամբ, եկեղեցականութիւնն է որ կը կորսնցնէ: Եկեղեցականութեան եւ երկրին շահը կը պահանջէ որ հայն իր պապենական ընկի եկեղեցւոյ ծոցը մնայ: անխախտ եւ հաւատարիմ: Հոն ծնած է, հոն պէտք է մեռնի:

— Խոտապահանջութիւն չէ՞ ձեր ըրածը. չտեսա՞ք, կրօն. ժողովն ինչ պատասխանեց Չարսանճագի քահանայացուներուն համար. «Պոլսոյ մէջ ընծայան չկայ» ըսաւ լմացոյց:

Բայց ո՞վ կ'ըսէ թէ Պոլսոյ մէջ անպատճառ քահանայական ընծայարան մը կենայու է: Արմաշու Դպրեւանքը ինչ է. ո՞վ կ'ըսէ թէ այդ հաստատութիւն լոկ կուսակրօնութեան ձուլարան մ'է. միթէ ասկէ առաջ, քահանայացուներ չպատրաստուեցան հոն: Ախ, այն խտրականութիւնը. եթէ առաջարկն արմաշեան վարդապետէ մը գար, այն ատեն Արմաշու ընծայարանը պատրաստ էր, այնպէս չէ՞, բայց որովհետեւ աղքատիկ թեմէ մը եկաւ, ընծայարան չկայ պատասխանուեցաւ. չի-

տակն աղուոր ուկտրուկ պատասխան:

Ընծայարան մը հաստատուելու համար միջոցը չէ որ կը պակսի, այլ կամքը, ապա թէ ոչ եկեղեցւոյ մը, օրինակի համար, Մայր-Եկեղեցւոյ յարակից սենեակներէն մէկունմէջ կրնանք ընծայարան մը բանալ, ուր գաւառացի եւ պոլսեցի քահանայացուներ կրնան պատրաստուիլ, բաւական է որ մէկ քանի կարող եկեղեցականներ յանձն առնեն ձրի դասախօսել, իսկ եթէ ձրի առնելու սովորութեան հետ ձրի տալու ունակութիւն չունին, այն ատեն յաջորդ թուով ցոյց կուտանք եկամուտին մշտաբուղիս աղբիւրը:

* * * Ինչպէս նախորդ շարժու յոյժ յայտնած էինք, Տ. Խաչապետն Սրբազան, Պատրիարքարանի պաշտօնական հեռագիրն առնելուն պէս, անցեալ կիր. օր ճամբայ եղած է, եւ այժմ Ատանայ կը գտնուի, ուր փայտուն ընդունելութիւն մ'եղած է իրեն: Խաչապետն Սրբազան, որ Տ. Մերքիսեղեկ Սրբազանի աշակերտն է, Ս. Յակովբեանց Միաբանութեան մէջ կարեւոր դերը մը կը կը գրաւէ, եւ շատ լուրջ, խոհեմ ու բանիւրուն եկեղեցական մ'է, այնպէս որ լիայոյս ենք թէ բոլոր Կիլիկիեցոյ համակրութիւնն առ ինքն պիտի գրաւէ: Միւս կողմէ, ինչպէս անցեալ շարժու ալ ըսինք, ինչպէս որ Կայս. Կառավարութիւնն ըստ ամենայնի ազատ թողած է կաթողիկոսական յառաջիկայ ընտրութիւնը, այնպէս ալ մեր ազգային իշխանութիւնը պարտին ազատ թողուլ ընտրողները: Ամէն անգամ որ Պատրիարքարանը միջամտած է սեւէ ընտրութեան մը, միշտ ճախող վախճան մ'ունեցած է: Չմոռնա՞նք նախորդ ընտրութեան արդիւնքը, որ պատճառ եղաւ այդ աթոռին տարիներով թափուր մնալուն: Շատ ուրախ ենք որ Պոլսէ ո՛ր եւ է մարդ չղրկուեցաւ, եւ անտարակոյս փորձ ալ չըլլար զրկելու: Կիլիկիոյ կաթողիկոսը, այդ ընդարձակ վիճակին ժողովուրդը միայն պէտք է ընտրէ՝ ո՛ր եւ է ճշնամէ ազատ. ահա այս է սկզբունքը: եւ մեր ալ զայս ըսել կ'ուզենք բացայայտ: Բ. Պ.

ՊԻՏԱՆԻ ԽՐԱՏՆԵՐ

Ակնոցներում ասպնեակներն աղօսանալի
արգիլել


Ակնոց կրող անձինք կը ճանչնան օդին փոփոխութեան ծանր անպատեհութիւնը, որ մէկէն խոնաւ շոգիով կը ծածկէ ակնոցին ապակիները, երբ տաք սրահ մը մտնեն։ Այս փոքրիկ խռթէն կրնան զգուշանալ, եթէ կանխաւ հոգ տանին զուտ կլիսեռնէն անցունել ակնոցին ռասնեակները, եւ յետոյ սրբել զանոնք խիստ չոր կտաւով մը։ Իրենց ակնոցները պիտի կրնան անաղօտ հանդուրժել օդին փոփոխութեանց, այնպէս որ ռասնեակները վայրկեան մ'իսկ պիտի չաղօտանան։ Սալօնները յաճախող կարճատեւներուն աչքը լս'յս։

Իւղի բիծերը մաքրել

Մէկ ունկի (once) փոշիացեալ ռսկերորակ (borax) և մէկ ունկի ալ ալքոլի մէջ հալած քափուր (camphre) առէք եւ մէկ լիտր (մէկ խորանարդ տասնորդամէդր) ջուրի մէջ դրէք։ Յետոյ այդ ջուրը փոքր շիշերու մէջ կրնաք բաժնել, պահելու համար։ Այս ջուրը կատարելապէս կը մաքրէ ճարպի, իւղի կեշտերն ու բիծերը, և բնաւ չաւեր կերպաններու գոյները։

Ցրնխածները բուժել

Դարմանը շատ պարզ է, զանոնք անհետացնելու համար։ Կնդրուկի (ասըլպէնտ) ալքոլիսառն գունաջուրով (teinture alcoolique de benjoin) օծեցէք ձեռքերնիդ, եթէ ձեռքերնիդ շատ վնասուած և ուռած է, պաղլեղաջուրով լուացէք, որ ցուրտխածութի դէմ ամենագլու դեղ մ'է։ Ի՛րր 250 կրամ պաղլեղ (չապ) կը հալեցնէք 750 կրամ գաղջ ջուրի մէջ։ օրը 2—3 անգամ կը լըուաք հիւանդ ձեռքը։ Մէկ քանի օրը կը բաւեն բուժելու։



Ա.ՊԻՐՆ ԿԸ ԽԱՅՏԱՅ

Ալպիոնի առիւծը, որ պատերազմի սկիզբէն ի վեր կարծես կը խորդար, վերջապէս խայտաց իր մորթին մէջ։ Իր ահաւոր բաշերը յանկարծ կը քստմիտն և կ'սկսին ահ ու սարսափ սփռել պօէրական կարդերուն մէջ։

Լոնտոն, բրիտանեան ռստանը, և բովանդակ Անգլիա, անպատում ցնծութեան մէջ կը խայտան այս պահուս, զի Լորտ Բուպէրդսի և Լորտ Քիչնէրի հրամատարութեան տակ գտնուող անգլ. բանակը վերջապէս յաջողեցաւ փայլուն յաղթութեամբ մը մաքրել Մաճուպայի պարտութեան արատը, անոր տարեգարծին օրն իսկ (1881 Փետր. 27) գերի վարելով ամբողջ պօէրական զօրաբաժին մը՝ Բրօնթէ զօրավարին հրամանին ներքեւ, ա'յն արիասիրտ զօրապետին, որ Զօր. Ժուպէսի աջ թաղուկը կը համարուէր։ Օրանթի ամբողջ սահմանագլուխը հիմա բացուած է անգլ. յաղթական բանակին առջեւ, որ արագ արագ կը յառաջանայ։

Այս յաղթութեան լուրն երբ Լոնտոն հասաւ, տիրող մաւախապատ տխրութիւնն յանկարծ փոխուեցաւ անօրինակ խանդավառութեան մը, և պաղարիւն անգլիացիք իսկոյն մոռցան իրենց կրած մասնակի սլարտութիւնները, և սկսան յաղթութիւն, յաղթութիւն գոչել, մինչ յաղթութիւն ու պարտութիւն քոյր եղբայր են Արէսի քրմշոտ ասպարէզին մէջ։ Եւ մարդիկ իրաւունք ալ ունին ուրախանալու, քանի որ 3—4 ամիսներէ ի վեր պարտութիւն միայն կրելու վարժուած էին։

Ի՞նչ պիտի ըլլայ, կամ ո՞ւր պիտի հասնի արդեօք Ալպիոնի ցնծութիւնը, երբ անգլ. դրօշը ծածանի Պէմֆրոնդայի կամ Բրէյդօրիայի բերդերուն վրայ։ Մարդասէրն եւրոպա մինչեւ վերջը պարզ հանդիսատե՞ս մը պիտի մնայ որ մոլեգնած աւիւծն իր մահափիւռ ճիրանին տակ բոլորովին ճմլէ այն ափ մը արիասիրտ ժողովուրդը, որ ցոյց տուաւ թէ արժանի էր իր պաշտպանած անկախութեան դատին։ Եթէ իրաւ է որ եւրոպական տէրութեանց միջեւ նախահոգ բանակցութիւն մը կատարուած է բարեկամական միջնորդութեան մը կռուանը գտնելու, ի դէպ ժամու ընդունել տալու համար

երկու պատերազմիկ կողմանց, ահա ճիշտամանակն է երբ անգլ. զինուց պատիւը փրկուած կրնայ համարուիլ, զի այսուհետեւ ոչ ոք կրնայ երկբայիլ անգլ. զինուց վերջնական յաղթութեան վրայ, քանի որ իյաւիտենից հաստատուած ճշմարտութիւն մ'է թէ հունաւորը չէ կարող դիմադրել անհունին: Պօէրական զօրութիւնն հունաւոր բան մ'է, մինչ անգլիականն՝ իր ամենագօր սակիին պէս՝ անսահման, անհուն է. նոյնպէս ճշմարիտ է թէ յաջողութիւնն է որ համարութիւն կը բերէ:

Գերմանիոյ կայսրն, որ ընդմիջման ճախորդ արշաւանքի պահուն, հեռագրաւ շնորհաւորած էր զՔրիստիան Նախագահ, զառաջինն կը փութայ շնորհաւորել իւր ծերունի մամը, Անգլիոյ Վիգթորիա թագուհին, անգլ. բանակին տարած փայլուն յաղթութեան համար, այսպէս մոռացութեան կողովը նետելով իր նախորդ հեռագիրը: Անգլիոյ Վեհապետուհին ալ կը փութայ շնորհաւորել իր երկու բախտաւոր զօրավարները, Լորտ Բոպէրդս և Լորտ Քիչնէյ, այս վերջինը մանաւանդ, որուն կը ժպտի բախտը, ո՛ւր որ ալ ըլլայ կամ ուր որ ալ երթայ, չէ՛ք Պուլլըր, Թուրքիայի վրայ իր խաղցած չըջապարին մէջ, Արէսի մէկ սիրուն ժպտին հանդիպելու բախտը չէրունեցած տակաւին թէ և սա ալ ստոյգ է որ Պուլլըր իր անցուդարձերով յաջողեցաւ զբաղեցնել Պօէրներու ստուար ուժը, մինչ Լորտ Բոպէրդս և Քիչնէյն նոր ուժեր կը համախմբէին, Օրանտի մահացու հարուած մը տալու, զի հասկցուած էր թէ անգլ. զինուց յաջողութեան անխտոր ուղին Օրանտի կողմն էր:

Յաղթութիւնը յաղթութիւն կը բերէ, ըսուած է: Քրոնթէի պարտութիւնը կ'ազդէ ժուպէնի վրայ ալ, եւ ահա՛ Պուլլըր, Ռոպէրդսի եւ Քիչնէյի փառքով կը փառաւորուի, յաջողելով ազատել վերջապէս գլէտիսմիթ:

Անգլ. զինուց այս յաջողութեան առջեւ, Պօէրք ուշ կամ կանուխ պիտի պարտաւորին զինամիտ ըլլալ, և թէ չեն ուղեր իրենց անկախութենէն զատ գոյութիւնն ալ վտանգել, եւ յիրաւի, հաշտութեան կնքուած Պօէրներուն համար ալ, բովանդակ մարդկութեան համար ալ բարիք մը պիտի ըլլայ, քանի որ պատերազմին հակադրեցութիւնը սկսած է ազդել ամէնուն վրայ, թէ՛ վաճառականին եւ թէ՛ սպառող ժողովուրդին վրայ:

ՔՈՒՐ-ԱՂԲԱՐ

[ԲԱՐՍԵՆԵՆԴԱՆԻ ՆՈՐԱՎԷՊ]

Ա.

Կիրակին մթներ էր բոլորովին, ու Բագոսի դարպասը կապեւաններուն գոցուելէն յետոյ տունի սեղաններուն շուրջը վերսկսած էր հիմայ:

Անցորդէ ամայի փողոցներու մէջ կը բըզզային դեռ խայտանքի ձայներու խել խօլ ծուէններ, ապերասան: Արմոնիքին պաղատագին գոչը սրկէ, անդիէն նուրբ ստեղնումը դաշնակին՝ որ չիթ չիթ կ'իյնար ականջներու մէջ, և շատերու բնակարանէն յիմար պօռուքներ՝ զոր ալքօլով լուացուած կոկորդը կը սլոթկար անդադրում:

Այսպէս չորս դին ի'նքն էր վաթկացողը, Բարկենտանքը, հաճոյքի, դիմակի և կերուխուսի այդ կծկծան բուլլինէլլան որ տարուան այդ շաբթուն յարութիւն առած՝ կուգար նորէն խուժանին չարչրուած հոգիներուն մէջ վաղցնել խօլ նեկտարը ցնծութեան:

Բարկենտանքը, ի'նչպէս ալ վարպետ էր լողողելու հէգ մահկանացուները թէ ատ փսոր մը երջանկութիւնը կրնայ բունկցունել ընդ երկար միալը սրտերուն, թէ լման տարուան մէջ քանի մը աւուր կայտիռօ՛վ է որ կը մեղմուի ամբողջ բրտութիւնը քաշկռուած, տափա՛կ կեանքին, և թէ վերջապէս, դնդերներու յոգնութենէն վերջ մարդ իր դադարն ունի — ըլլայ թող պըզտիկ, ըլլայ թող ողորմուկ, — մոռնալու համար պահ մը սառ ու տարակուստ դիմագիծը վաղորդային:

Մութը սաստիկ էր դուրսը, աչք աչքի չի տեսնելու աստիճան: Կիրակին կ'ոգեւարէր ալ, ու գիշերը իր սեւ վաթկաններուն տակ կ'ուրուանկարէր պատկառոտ կերպարանը Մեծպահքին...

Անձրեւը թել թել կ'իջնար վերէն, տանիքներու թիթեղին մէջ թգկալով ու ջըխջխանքի երգը կանչելով դետնի աղապալիկ սալարկներուն վրայ: Մինչ փողոցի ցից լապտերները կը հեւային դէմի թաց պատերուն այտին՝ ուր ատեն ատեն կը փռուէր խօլ

չքանկարը դիմակաւոր խումբերու:

Կէս դիշերը անցած... րայց ինչո՞ւ լոյս ու աղմուկ յորդէին շատ մը պատուհաններ, ատենը չէ՞ր պառկելու:

«Չէ՛, լուսցնելո՛ւ է, լուսցնելո՛ւ, մինչեւ որ լամբարին կտուցները ցամքին, դէմքերը խաշին դիմակին տակ, խռչափողը քերթուի ցուցքով, քահքահով ու սրունքներ պարտասին պարերէն...»:

Առտուան լոյսին հետ փախչելու պատրաստուող մեծ հապիտին՝ Բարեկենդանին խանդոտ պատուէրը չէ՞ր ասիկա:

Բ

Ձրի՛նկ... դրան կոճակին պինդ դառնալուն հետ՝ Ս***եաններու տունը թրթռացող զուարթ հունչքը վանգակին:

— Մասքէ՛ է, մասքէ...

Ու երկսեռ ծիծղուն բազմութեան մէջէն որ փունջ փունջ սանդուխներուն բարամբունքին շարուած էր՝ վեր կ'ելլար դիմակաւորներու այս նորեկ խմբակը, հետը քաշելով հիացիկ միմեանքը հետաքրքիր ներկաներուն:

Իրաւցնէ հանուելի՛ք էին ամենքն ալ իրենց ճաշակաւոր բարեքիկ ծպտումներով: Ալպիոնի գաւակ մըն էր եղեր մէկը, ծովէն այրած երեսովքի բան բերնին ու նաւաստիի շեղ դրած գլխարկին ժապաւէններուն զոյգ ծածանքը ծոծրակին, միւսը անուշ սպանուհի մը, դեղձ այտերով, դեղձան մազով, նռնագոյն բէշին վրայ նկարուն՝ արծաթ ողկոյզներ խաղողի, պղտիկ կարմիր ականջներէն՝ ոսկի օղակներ առկախուած, ու պարանոցին վարը եռանկիւն մը հեշտին՝ ուսկից վար ծիծերուն սուտ կոհակը կը վէտվէտէր: Անդիինը Բեհեղգեբուզն էր, տարտարաւի սև բնակիչը, Զգլիկի թեւերը կռնակէն ու երկ-ժանին կմախ մատներուն մէջ, ժանկոտած դէմքը պրկուած պաղած՝ զահանդելի ծափածուութեան մը մէջ որուն ցրտութիւնը կը մեղմէր միայն պոչին բոժոժներուն միօրինակ թոթուրութեամբ: Սա՛ յլամարտիկի կերպարանն էր կեղծած, անոր երանգաճոխ տարազին ամէն մանրամասնութիւնը խտացուցած իր վրայ և ցուլի զայլոյթը երես-

րուն, նա՛ ձարոն մը, դեղնախտէ վարակուողի մոյնքերով, ճակտին զառթափէն վար խոյալոյ աչուըներովը խայտաճամուկ պատմութեան մը թոյլօրէն վրան առած, ձեռքը թէյի տուփեր ու կռնակը վիշապի պատկեր մը զոր կիսով չափ կը գոցէր կախ հիւսքը՝ քերծուած գանկէն ծայր առնող իր մազին:

Անդին ուրիշ մը կար սակայն, ամէնէն օռիժինալը իր հագուստով, հասակով ամէնէն տիտանը որ կը մթնցունէր մասամբ իր ընկերներուն զգեստաւորումը: Անթերի Հիւսար մըն էր. սև փայլուն մոյկերուն մէջէն յաղթ պճեղները դուրս կը նետուէին ձերմակ սեղմ տարատով մը, կանանչ գրահապատ լանջքին վրայ շքանշաններու շարքը, և թիկնեղ ուսերուն հեծած ոսկի ծոպերուն խուրճերը կը փողփողէին շքեղօրէն, ստեղծ գլխանոցին ծայրը վայելչապէս կ'երերտկար ցցունազարդ գարգմանակը: Ուէլիկդընի ջիղը կար բազմակներուն մէջ և Պօնաբարդի խանդը՝ անոր մոլոր նայուածքին խորը:

Ու սկսան ասոնք իրենց պարերուն, խառնուելով միւս անդիմակ զոյգերուն որ կը կայթէին արդէն դարձդարձիկ տողանցումով մը՝ կիթառին և մանտոլինին զուարթ եղանակովը: Աչքի տարօրինակ վայելք մըն էր դիտել զիրենք որ հիմա գիրկընդխառն՝ մագուրքային պինդ տատանումներուն հետ իրենց տարազին զանազանութիւնը ծալ ծալ կը ծածանէին լոյսերով ողողուն սալօնին մէջ:

Հիւսարը անկիւն մը արձանացած կը մընար սակայն, թեւերը մէջքին ու կռնակը պատին: Շատերէ կարծուեցաւ թէ պար չը գիտէ: Ոչ ոք կրցաւ թափանցել անոր սառ կերպարանէն ներս. տեսնելու էր ինչ որ կը պտուտքէր ստեղծող գլխանոցին տակ, ինչ որ կը փոթորկէր հիմայ անոր գանկին հանդարտ կեցուածքին մէջ:

Յետոյ յանկարծ սկսաւ ճեղքել պարողները, անցնիլ սրահէն անդին ու քովի խռցիկը սպրդիլ անտարբեր երեւոյթով մը: Իրմէ առաջ մանկամարդ կին մը մտած էր արդէն հոն: Այս անգամ չի նշմարեց սակայն ներկաներէն ո՛չ մէկը:

...Ներսը, պատրոյգը քիչ մը վար առնուած լամբան կ'ուրուանկարէր նոյն դե-

ուստի կինը աղօտակի՝ որ ճօճուն առարկայի մը վրայ ծռած ու փարած սնոր, ըստինքը կը կարկառէր իր որդեկին. մինչ հիւսարը մոյկերուն ծայրին կոխելով մօտեցած էր անոր. և, տենդոտ բազուկները օղակ մը ձեւացուցած անոր մէջքին՝ չիմացուելով չափ կամաց կը մրմնջէր հիմայ.

— Ե՛ս եմ, մի՛ վախնար, իմին սի...

Խօսքը չի կրցաւ ամբողջացնել, թեւերը կը դողդղային, կուրծքը պայթելու աստիճան կը տրոփէր ու բառերը կը խղդուէին կոկորդին մէջ...

9.

Վերը Աստուած մը, վարը տիրամարմուններ. տիրամարը իր քոյրն էր որուն հետ, որուն քով մեծցած էր՝ անոր կոյսի անուշ խնամքները վայելելով. ինքն ալ խնկարկելով դայն եղբոր գուրգուրանքի անմէնէն նազելիներովը, Հայրերին չպիտու դարդի մը պէս տունին անկիւնը կը մնար, դործէ կանուխէն քաշուած, համրիչը ձեռքը և աղօթքը յար շրթունքին վրայ:

Այն քանի մը ամիսներու անգործութենէն յետոյ զոր դպրոցէն դուրս ունեցաւ Երուանդ՝ կրցած էր նախանձելի պաշտօն մը ձեռք ձգել, Հիմակ վարդի պէս կ'ապրուէին, ու Երուանդ տղու սին ծրագիրները ջրած բոլոր՝ իր վաստակին մինչեւ վերջին փուլը իրեններուն կը յատկացնէր:

Չէր յիշեր ատեն մը որ անոր սիրտը արունած ըլլար նախատինքով մը, ոչ ալ օր մը որուն մէջ զրկանք մը ըրած ըլլար քրոջը դարդի կամ քիմքի փափաքներուն:

Դպրոցի քանի մը սիրտի մօտիկ ընկերներէն Սեդրակը միայն մնացած էր հաւատարիմ՝ իր տունը այցելու, միւսները լքեր էին հին բարի օրերու մեղր մտերմութիւնը: Շէնք չնորհք երիտասարդ մըն էր ան, պերեւշտները սկսած էին մլտտիլ ու վեր դառնալ, ու բախտը Երուանդին պէս չուտով ժպտած էր իրեն:

Երուանդ միտքը կը բերէր դպրոցականի այն իրիկունները որոնց մէջ սենեակին քաշուած դաս կը պատրաստէին, մինչ քոյրը կուգար եփուած սուրճը հրամցունել կիսաբաց դուռնէն՝ եղբորը ձեռքով: Եղբօ՛րը

ձեռքով. չգիտեմ ի՞նչ ամօթխածութիւն մը պզտիկուց բոյն դրած էր Երուանդի մէջ՝ որ քոյրը զգուշացնէ տարասեռ էակներէ: Այս հին խպնոտ ունակութիւնը իր չափահասի տարիքին մէջ մարելու տեղ աւելի՛ բոց առած էր, ու ինք հիմա իր եսին հետ հակասութեան մէջ կը մնար թէ ինտո՞ր վարուելու էր ընտանեկան ասանկ փափուկ պարագայի մը մէջ:

Իրականութիւնը ուս էր որ Սեդրակի ոտքը անոնց սեմին դպած օրէն՝ տարտամ համակրութիւն մը սկսած էր բողբոջիլ երկու հոգիներուն ալ մէջ: Ամէն անգամ որ ընկերը մեկնելու ըլլար՝ դուռին քովի պատուհանին մէջ կը շրջանակուէր ու կ'աներեւութանար խկոյն քնքուշ դիմագիծը Սաթենիկի. պզտիկ, կողմնակի հայու մը երկուստեք, ու յետոյ մեկնում: Այս դադտ համակրանքը որ աչքի պոչով սկսած էր, բայց բերնով չէ՛ր ընդլայնուած, երթալով պաշտումի կը յանգէր սակայն, երկուքին ալ սիրտը տարփանքի խռովքը կաթեցնելով:

Եթէ եղբայրը կռահէ՛ր, եթէ փոքր մը ... բայց անգուր Վայրկեանը հասած էր վերջապէս: Իրիկուն մը գործէն դարձին՝ Երուանդ նշմարած էր որ անոնք պարտէզը՝ գլուխ գլխի կը տեսակցէին: Եւր իրենց քով հասաւ՝ իրարմէ ցրուած գտաւ զիրենք ու վար ծռած՝ թութ ուտելու երեւոյթով մը: Բնաւ երես չեկաւ, բայց հակառակ անտարբեր ձեւանալուն՝ իր խռով կերպարանին մէջ որոշակի կը կարդացուէր ցասումի մըրրիկը: Ի՞նչ, Սաթենիկ, տարիներու թարմ աղապատանքովը մեծցած ու սնած քոյրը օտարի մը սիրտին հետ փոխանակէր եղբոր սիրտը նուիրական... Այս անգուր գաղափարին՝ որ ուղեղը կը լլկէր չարաչար՝ չի կրցաւ հանդուրժել. և քանի մը օրեր անցնելէն վերջ՝ որոնց մէջ բերանը կղպած կը մնար տունը, սիրտին լեզին ու հոգիին ծանգը սա բառերով ործկաց.

— Ես հոս ա՛լ գործ չունիմ:

Ու առաւ քաղեց կէտիկ փաշայի հայրենի երգիքէն՝ Բերա տուն մը բանտիօնէն ըլլալու: Գուր—Աղբար, այս քնքուշ բառերը եթէրային դիւթքով մը մէկմէկ զուգորդող միութեան այն դիմը որ կար մինչեւ

տ օրը՝ կ'իյնար, կը թուլնար, կը հալէ՛ր
այսպէս:

Բայց բաժնուելէն վե՛րջն էր որ սկսաւ
լուսն տառապանքը իր հոգիին: Քրոջմէն
լատուած, այս այն վիճակն էր զոր կ'ու-
նենայ մարդ երբ բիրեքէն մին, կամ քիմ-
քին ու ռունգերուն զգայնութիւնը յա՛ն-
կարծ կորսնցունէ: Իր մենութեան օրերուն
մէջ՝ ուր ներսը մորմոքներով կը խըխէր միշտ,
երուանդ զգաց անշափելիութիւնը քրոջ սի-
րոյն, և հանդարտ նայուածք մը նետելով
խնդրոյն՝ մեղադրելի ոչի՛նչ գտաւ Սաթե-
նիկի վրայ: Ան սիրտ մը ունէր որուն մէջ
եղբօր սէրէն զատ պէտք էր ուրիշ մըն ալ
արթննար, կեանքի սովորական երեւոյթ-
մը, շտ'տ բնական ու շատ ալ պարզ: Իր
չուրջը, իր քովը խլրտող մարդերուն ալ
նոյնը չէ՞ր միթէ:

Ու ցաւեցաւ իր կուրութեանը վրայ որ
ա՛յնքան բիրտ, ա՛յնքան չար ու ա՛յնքան
վատ ըրեր է զինքը:

Տունը լքած օրէն ի վեր տարին անցած
էր. իմացած էր թէ կարգուած էին անոնք:
Ճշմարիտ զղջումը հետզհետէ կուգար մեղ-
մել խիղճին կսկծանքը. բայց կարօտը
ի՛նչպէս, ի՞նչ երեսով երթար ձեռուներին
թոթուելու, ճակատին համբուրելու և մե-
ղայ, մեղա՛յ ըսելու անոնց:

Բարկենտանքը լաւագոյն պատուակը
ծնցուց իր մէջ, գիմակ կը դնէր, զգեստով
կը ծպտէր և ուրիշներու հետ կը մտնար
հոն: Ինչպէս որ ալ ըրաւ: Եւ այն պահուն
որ իր հիւսարի արի կերպարանքով քրոջը
քով գացած էր բառեր մը կ'մկմալով. — «Ես
եմ, մի՛ վախնար, իմին սի...», կ'զգար թէ
իր գիմակին կապերը կը թուլնային ծոծրա-
կին վրայ, սուտ երեսը գետին կ'իյնար, ու
Սաթենիկ կը տեսնէր իր եղբայրը, տոգոյն,
դողդոջ: Ու ողջագուրանքը կ'սկսէր յան-
կարծ, լանջք լանջքի, չունչ չունչի, տա՛ք
ու եռանդուն...:

...Պարերը աւարտած էին հիմայ: Յի-
մարութեան որդը սատկած էր վերնամաշ-
կերու տակ, ու սրահին տախտակամածը՝
ներբաններու ծեծկըւուքովը հեծելէն չունչ
առած: Շուրջի աթոռները կ'ստախուփ աչ-
քերու զարթոթում չ'պատկերներ կը ցուցա-

դրէին մեղկօրէն: Արշալոյսը պատուհաննե-
րուն նախշուն շերտգոյրերէն իր դէմքը
կը ցուցնէր, կազի լոյսերը դեղնեցնե-
լով: Բազմութիւնը կը մեկնէր խումբ
խումբ, քրտնած յարրած, մինչ գիմակաւոր-
ները սանդուխներէն վար իջնելուն՝ ապ-
շած և վարանոտ իրարու կը նայէին, թէ
ի՛նչ դիտումով ընկերներն հիւսարը հոն կը
մնար...:

Հ. Կ. Մ. Մանուկ

— 3619 —

ԱՐՅՈՒՆՔԻՆ ՄԷՋ

(ԶԱՅՆԵԱԿ)

— 3620 —

Կը խրատան ցաւես այս հեգ ու մանրիկ
կաթիլին մէջ որ կը յորդի տա՛, հրգօր,
Սրտիս խռովի, պիտի շիղերուս փոքորիկ
Կը նիւթան փալփրլանքին մէջ անոր...:

Ու ներսիդիս այրող բոլոր խօլ չարիք,
Գալարումներն անառակ, տեղն հուր խոժոռ
Լայն սարսուռներէն երակներուս սասկոյոր
Ինձ կը քուլին շուշափուլի պահ մը աննիգ...:

Յուզումներուս աշխարհն աննիւք, նուրբ,
անձայր,

Կը սրպրդի այդ կաթիլին մէջ սնոսի,
Արցունքիս՝ որ պիտի ցամփի ա՛լ խալառ...:

Ու կաթիլին մէջ պաղած, սառ, իմ քրքուռ
Յիւսահանքս այրած լրու՛ն ալ պիտի,
Վերջին քախճոս փալփրլանքով մարմրուռ...:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ



ՊՈՒԻՆԴԻԵՌԻ ՃԱՌԸ

Ֆրանսայի արդի նկարչութեան ամէնէն մեծ ներկայացուցիչներէն Բիւվիս տը Շավան, որ իտէալապաշտ Դպրոցին կը վերաբերի, բացի հիացողներու ըստուար խումբէ մը, իր անստղիւս հանձարին ամէնէն ճշմարիտ ներբողը ընդունած է Ակադեմիոյ անդամներէն մեծանուն քննադատ Ֆէրտինանտ Պիւրն-դիէռէ: Այս կարճ բայց ազդու ճառը անգամ մը եւս կը շեշտէ կարեւորութիւնն այն դրութեան որ յեղաշրջած է, վերջին ատեններս, իր նոր ձեւափոխութիւններով, գրականութիւնը ինչպէս նաեւ գեղարուեստները հաւասարապէս: Բիւվիս տը Շավան իր խորհրդամուկ վերջինին թովքը փոխանցած է այսպէս իր Դպրոցէն դուրս ելող արուեստագէտներու եւ գրագէտներու երեւակայութեանը:

Ե. Գ.

«Ամէն բանէ առաջ, պիտի ուղէի ոչ թէ զձեզ գովել եւ շնորհաւորել, այլ շնորհակալ ըլլալ ձեզ, նկարչութիւնը «այերացուցած» (aéré) ըլլալու համար: Մարդ կը շնչէ ձեր գործերուն մէջ, ձեր սրբազօծ անտառներուն հովանիին տակ օդը հիւսկու գայ յորձանապտոյտ: Խորհրդաւոր շունչեր, անոնց մէջ, թեթեւ ու փայփայուն, կը յուզեն, կը բարձրացնեն, կը սլացնեն բոլոր ձեր վրայ հիացողներուն երեւակայութիւնը մինչեւ ձեր շնորհքի ու գեղեցկութեան անուրջին բարձունքը: Ի՞նչպէս բառերով պիտի յայտնեմ ձեր առեղ առթած տպաւորութիւնը ա՛յնքան առանձնայատուկ ու ա՛յնքան նոր: Բռովանսի ու Նորմանտիայի նկարիչ, վերակոչող (évoqueur) հաւասարապէս ներշնչուած՝ մեր ցեղին ամէնէն հեռակայ անցեալին, կամ բնագաւառին ամէնէն թաքուն ներդաշնակութիւններուն, բոլոր ինչ որ գիւղանկարի արուեստը, մեր ժամանակին, իրականացուցած է տեւական յաղթա-

նակներ, դուք տիրացաք անոնց, ձեր ստացուածքին պէս, կազմելու համար անոնցմով յիշակերտական (monumental) նկարչութեան հոսանքն ու լայնասփիւռ հոգին: Բացի պարզութենէն, առանց ոչ մէկ արուեստականութեան, զգայութիւնը տուիք մեզ բոլոր այն նուրբ առնչութիւններուն որ մարդկային էակն իր միջավայրին արարածը կը դարձնեն, հոգին, օդերուն ու ջուրերուն արտացոլացումը, դուք անշուսփելին նկարեցիք: Եւ աւելի երջանիկ քան այն փիլիսոփաները որ կը շարունակեն տակաւին հառել միջոցին բնութեանը վրայ, դուք, այո՛, դուք կրցիք պատառին վրայ առնել զայն:

«Ձեւը ու գոյնը ձեր գործերուն մէջ խորին նոր նշանակութիւն մը ու նոր ուժ մը առած են: Դուք երբեք անոնց վերագրած չէք «խորհրդանշական» (symbolique) արժէք մը, դուք երբեք փորձած չէք խօսիլ անոնց լեզու մը որուն այբենարանը չե՛ն անոնք բնաւ: Դուք երբեք առեղծուած մը չտեսաք կապոյտին մէջ, ո՛չ ալ խորհուրդ մը փնտռեցիք կարմիրին ծոցը: Բայց եթէ գոյնը ու ձեւը, մեր զգայարաններուն վրայ իրենց ազդած զօրութեանը համեմատ, մերթա՛յնքան նիւթական բան մը ունին իրենց մէջ, դուք զանոնք «հոգիացուցիք»:

«Ձեւին նշանակութիւնը ստորադասելով մտածումին պահանջումներուն, յստակութիւն մը տուած էք անոր: Դուք մեղմացուցիք, անօտարացուցիք ինչ որ գոյնը իր փայլին մէջ յաճախ չափազանց կուրացուցիչ կամ նոյնիսկ չափազանց բիրտ բան մ'ունէր, քիչ մը փափուկ աչքերուդ համար: Ձեր նկարները այսպէս առլի ու ոգեւորուած են իտէալ զէմքերով որ ամենքն ալ կը յայտնեն ձեր մտածումէն մաս մը: Միթէ ասիկա ըսել չէ՞ թէ զգայարանները իբր միջոց (intermédiaire) միայն կը ծառայեն ձեզ՝ կրնայ ըսուիլ թէ դուք մաքրած, զտած էք զանոնք, կամ, ուրիշ խօսքով, հոգիին է որ դուք աւելի ուղած էք դիմել, եւ զարմանալու ի՞նչ կայ երբ ըսուի թէ հոգին է որ պատասխանած է ձեզ»:

«Որովհետեւ պէտք է աւելցնեմ վերջին խօսք մըն ալ, այերացուցած եւ հոգիացուցած ըլլալով նկարչութիւնը, դուք զայն

«բանաստեղծացներ» յաջողած էք: Քիչ մը անշուք, հասարակ դարձած էր անիկա այս դարուն կիսուն, եւ, չգիտեմ ի՞նչպիսի ազդեցութեան մը տակ, կարծես թէ ալ ուրացած էր իր ամէնէն ազնիւ ու բարձր տենջանքները: Բնութեան նմանողութիւնը, որ նկարչութեան անհրաժեշտ սկզբունքն է, կը թուէր թէ ո՛չ միայն վերջնական նպատակը եղած էր անոր, այլեւ ամբողջութիւնը: Դուք չբողոքեցիք այսպիսի եղանակի մը սահմանափակութեան դէմ, այս չէ՛՞ ձեր վարուելու կերպը, և ձեր համեստութիւնը հաւասարած է ձեր հանճարին: Սակայն բնութենէն պահանջեցիք դադարի՞ք բոլոր այն զգիւիչ ներդաշնակութիւններուն զորս անիկա գիտէ խառնել երբեմն ա՛յնքան բիրտ տարրներու հետ: Դուք բոլորովին տիրացաք ատոր, և անկէ վերջ, ա՛լ զայն վերածեցիք ձեր մէջ բոյն դրած խտէպին բացատրիչ դերին: *Ludus pro patria*, Մուսաներու սիրական սրբազան անտառը (*Bois sacré cher aux Muses*), *Inter artes et Naturam*, Սոսպոնի կիսասրահը (*Hémicycle de la Sorbonne*), բոլոր այս գեղեցիկ այլաբանութիւնները ձեր մէջ գտած են պատկերացում:

«Բնութիւնը միայն նիւթ մը կամ պատրուակ մը հայթայթած է ձեզ, մնացածը ձեզմէ ելած է, ու այս մնացածը, ձեր անձէն դուրս այս յաւելումը միթէ այն բանը չէ՞ զոր բանաստեղծութիւն անունով կը յորջորջենք: Ըսել կ'ուզեմ ա՛յն կարողութիւնը զոր ունիք տեսիլներ (*vision*) կանչելու ձեզ՝ որ կը հրճուեցնեն ու կը սրբացնեն մարդուս աչքերը, ու այս տեսիլներուն միջոցաւ այն կարողութիւնը զոր ունիք խորհուրդներով առլի երազներ թելադրել մեզ, ու, վերջապէս, այս խորհուրդներուն թեւարկումներուն վրայ, կարողութիւնը վտարելու մեզմէ ներկային մէջ տիրող հոգերը և իրականութեան մտազբաղումները:

«Եւ ահա ինչո՞ւ, Սիրելի և մե՛ծ վարպետ, ամէն կողմէ վազեցինք եկանք այս երեկոյ խոնովին ձեր շուրջը: Ձեր բոլոր գլուխ-գործոցներուն շնորհիւ, եթէ ձեր արուեստին պատմութեանը կը վերաբերիք, ոչ նուազ կը վերաբերիք նաեւ — և արդէն փորձեցի ըսել մէկ քանի պատճառները —

այս դարուն գաղափարներուն պատմութեանը: Շատ մը բաներ զոր անհետացած, մեռած կարծած էին, և զոր ամէն պարագայի մէջ բռնովին թաղած, մարած էին, թերեւս անոնց մահուան պատրանքը ունենալու համար, լոռվին բայց յամառօրէն հաւատարիմ կեցաք անոնց, եւ հիմա որ կը տեսնեն անոնց վերապրիլը, հիմա ևս ձեր գործերուն ճշմարիտ նշանակութիւնը կ'սկսի երևնալ իր բոլոր կատարելութեանը ու ընդարձակմանը մէջ: Դուք չխորհեցաք ուրեմն թէ արուեստին նպատակակէտը ըլլար արտացոլել հմտութիւնը (*virtuosité*) արուեստագէտին, ոչ ալ մանաւանդ շողքորթել նորեկը (*mode*) և անոր հպատակելով զայն ապականել իսպառ: Չհաւատացիք նաեւ թէ իր դերը ըլլար բնութեան հայելին ընել ինքզինքը և գրգռել մեր հիացումը, ըստ ծանօթ *խօսքին*, նմանողութեամբը այն իրերուն որոնց նախատիպերուն (*originaux*) վրայ չենք հիանար իրականութեան մէջ: Բայց դուք, ձեր ակնարկը աւելի հեռուն մղելով, դուք արուեստին տուած էք անկեղծութիւն մը իրրեւ նպատակակէտ և իրրեւ օրէնք: Քաջ գիտնալով թէ նկարիչը բանաստեղծին նման ճշմարտապէս հոգիներու վկայութիւնն ունի, դուք բացատրած, արտայայտած էք ձեր գործերուն մէջ ինչ որ մենք գաղափարներ անուանած ենք: Ձեր երեւակայութեան քաղցրութեամբը ու շնորհալիութեամբը մխիթարութիւն թափեցիք սրտերու մէջ:

«Դուք արուեստը արժանացուցիք իր գործողութեանը ու իր ընկերական պաշտօնին... Ասոնք մեծ բաներ են եւ չեմ կարծեր որ գտնուի մէկը որ հերքէ զիս, երբ ըսեմ թէ բոլոր ասոնք կ'ապահովեն աշխարհ, ապագային մէջ, ձեր տիտղոսին, ձեր աստիճանին եւ նկարչութեան վարպետներէն մէկը ըլլալնուդ փառքին հետ նաեւ միեւնոյն տիտղոսով, միեւնոյն աստիճանը, միեւնոյն ձեր դարուն եւ մարդկութեան բարեգործի մը փառքը:

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԲՍՈՒՐԱՆ

“ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ, Ի

ԳԵՂԵՏԻԿԸ. — ԱՐՈՒԵՍՏԸ. — ԱԼ-ՇԻՄԻՆ

ԱՐՈՒԵՍՏ (Art). — Այս բառը, որ լատին *ars, artis* և յայն արեդե (առաքինություն, գործարարական նշանակող) բառն է, իր ընդարձակ առմամբ կամ իմաստով, կը նշանակէ բոլոր ամբողջութիւնն այն միջոցներուն, եղանակներուն՝ որոցմով մարդ կը կարողանայ արտադրել գործ մը, ապահովելու նպատակաւ թէ՛ իր գոյութեան պահպանութիւնը և թէ՛ իր ֆիզիքական (մարմնական) բարեկենդանութիւնը, թէ՛ պատճառելու ստեղծելու համար իմացական, հոգեբանական կամ բարոյագիտական վայելում մը, յորմէ ծագումն առած է արուեստներուն՝ օգտակար Արուեստներ, մեքենական Արուեստներ, և ազատական Արուեստներ անուամբ մեծ բաժանումը :

Մեքենական արուեստները կը պահանջեն ձեռքի աշխատութիւն կամ մեքենաներու օգնութիւնը, կամ կը շահագործեն բնութիւնը, ինչպէս երկրագործութիւնը, կամ կը կերպարանափոխեն բնութիւնը, և այս առթիւ ծնունդ կուտան ճարտարագործական և ձեռագործական արհեստներուն, որք յ'անհունս կը բաժնուին համեմատ ա'յն արուեստական միջոցներուն զորս կը գործածեն, կամ համեմատ ա'յն պէտքերուն զորս կը գոհացնեն, ինչպէս են ուտեստի, հագուստի, բնակարանի եւնի վերաբերեալները :

Ազատական արուեստները՝ երեւակայութեան արգասիք են, և կը վերաբերին կամ մի միայն մտքին, ինչպէս են Դեղեցիկ դրարութիւնք, կամ մտքին հետ միեւնոյն ատեն զգայարանաց ալ, ինչպէս ղեղարուեստները :

Հիները եօթն ազատական արուեստ կ'ընդունէին. — Բերականութիւն, Հռետորութիւն, Փիլիսոփայութիւն, Թուաբանութիւն, Երկրաչափութիւն, Աստղագիտութիւն և Երաժշտութիւն : Նուիրական արուեստ անուամբ կը կոչէին հիները, մանաւանդ Աղեքսանդրիոյ դպրոցին վարդապետք, Քիմիաբանութիւնը կամ տարրագիտութիւնը

(Chimie), որուն գաղտնիքը կրօնականաց եւեթ վերապահուած էր : Հիներուն այս Շիմի քուռածն այժմեանցս հասկցած Ալեքսիմն էր :

ԱԼՇԻՄԻ. — Կ'արժէ որ այս բառին և անով հասկցուած ծածկագիտութեան մասին ամբողջացուցիչ ամփոփ և որոշ դադափար մը տանք : Ալ-շիմին՝ Ալ-ճէպրային պէս՝ արաբական բառ մ'է, արաբ ալ յօդէն և Շիմի բառէն կազմուած : Կախարդական կամ ծածուկ գիտութիւն մ'էր, որով կը մշակէին՝ այսօրուան պէս և հին ատենները՝ շիմին (տարրաբանութիւնը), մարմնոց բաղադրութիւնները կ'ուսումնասիրէին և հետամուտ էին բնութեան բոլոր գաղտնիքները խելի վեր հանելու : Բայց եղջերուաքաղային սանպատակն ու յաւակնոտութիւնն ունէին թէ անարդ մետաղները թանկագին մետաղներու կրնան վերածել, ոսկի շինել, յօրինել փանասէ մը (բառ յունական՝ բան ամեն եւ ամեն) (թժշկել) բառերէն կազմուած) այսինքն ամենաբոյժ կամ տիեզերական դեղ մը՝ որով մարդկային կեանքն անսպառ կերպով երկարակեաց լինէր : Այն ամենակարող ազդեակը կամ գործիչն՝ որուն միջոցաւ Ալ-շիմիսները կամ տարրաբաշխները այս հրաշալիքները պիտի գործէին, կը կոչուէր փիլիսոփայական բար, և գործողութիւնն ալ կ'անուանուէր Մեծ գործը : Դեռ այս հրաշագործութեանց երազներով՝ որոնց տեսակ մը բովանդակարանն է մեր մէջ հին ատեններէ ի վեր Վեցիազարեակ անուամբ ճանչցուած և քաջ մաթեմատիկոս Անանիա Շիրակացւոյն ընծայուած գիրքը, այս քիմիահրաշ երազներով բռնկող ու միացող Պոլսեցի և գաւառացի տգէտներու երամակներ ունինք : Սնդիկը, ոսկին և ծարրաքարը (անդիմուան) են այն մետաղները զորս աւելի կը գործածէին Ալշիմիագէտք : Ալքիմիականութիւնը յաճախ մոգութեան և աստղաբաշխութեան հետ միացած գիտութիւն մ'էր : Եգիպտացիներն այս գիտութիւնը կը կոչէին Գուրական արուեստ, որպէս ի վեր անդր ակնարկած ենք, որովհետեւ անոնց քուրմերուն ու կրօնականներուն յատուկ ուսում մ'էր : Հեմիսեան արուեստ ալ կը կոչուի, որովհետեւ անոր գիտար

ուածին—Յոյնք եգիպտացի թօթ աստուածը եռամեծն Հերմես կը կոչէին: Ալլիմիին անու- նը ինչպէս ըսինք, արաբացի է, և թէ՛ դա- րէն անդին չանցնիր: Սակայն սոյն գիտու- թեան ներհմութեան անոր շատ մեծ հնու- թիւն մը կ'ընծայէին: Անոնց կարծիքով, ջրհեղեղէն առաջ, թորէլ կամ թորէլ-կայէն այս գիտութիւնն ու արուեստն ի գործ կը դնէր, իբր թէ Նոյի որդին՝ Բամ՝ այս գի- տութեան գաղտնիքն աւանդաբար պահած եւ յետոյ եգիպտացուց ալ ուսուցած լինի. և Բամին անունէն առնուած ըլլայ Քիմիան: Սակայն ինչ որ ճշմարիտ կը թուի, ու՛ է թէ եգիպտացիք շատ կանուխէն, ինչպէս նաև Չինացիք, քիմիաի գիտութեան մէջ իրենց ընդարձակ ծանօթութիւններն ունէին, որք Փառաւոններու ժողովուրդին ձեռք անցաւ Յունաց և Արաբաց ձեռքը, և ասոնք ալ բերին Արեւմուտք:

Միջին դարու մէջ տիրող գիտութիւնն էր Ալքիմիականութիւնը. բայց հետզհետէ ճշմարիտ գիտութիւնք որքան տակաւ աւե- լի զարգացան, ալքիմիականութիւնն արժէ- քագուրկ եղաւ, և 17րդ դարուն Ալ-չիմիան կոչուեցաւ քիմիա՝ այսօրուան տարրաբանու- թեան իմաստով. և հին գիտութեանէն առաւ պահեց ինչ որ իրեն օգտակար գտաւ, թէև դեռ կարգ մը մարդիկ աշխարհի բոլոր կող- մերը կը գտնուին Ալքիմիայի ախտարակաց ախտով վարակուած:

Սակայն, ինչ որ ալ ըսէ արդի գիտու- թիւնը հին ալլիմիին համար, սա ճշմարիտ է թէ կարեւոր գիւտեր եղած են իր խու- զարկութեանց շնորհիւ և արդի տարրաբա- նութեան կամ բնական գիտութեանց հի- մունքն ու սերմունքն է եղած և շատ մը նշանաւոր հեղինակներ ունեցած է որոց մէջ նշանաւոր է Բոթէ Պազոն որ վառօդը գտաւ, ինչպէս ուրիշներն ալ ուրիշ կարգ մը հան- րօգուտ գիւտեր և հնարքներ յառաջ բերին Ալքիմիականութեան շնորհիւ:

Յարմար առթիւ մը պիտի խօսինք սոյն գիտութիւնը մեր Ազգին մէջ ներմուծող ա- ռաջին հայ ալքիմիագէտներուն վրայ:

Ա. Լ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՓՈԽՄՇԱԿՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՆՈՒԱՄՆԱՅ ՓՈԽՄՇԱԿՈՒՄ ՀԱՆԳԻՍՏՈՎ

1 Տարի	2 Տարի	3 Տարի
Յորեն կամ հաճար	Գարի կամ Կարսակ	Հանգիստ

ՆՈՒԱՄՆԱՅ ՓՈԽՄՇԱԿՈՒՄ ՍՈՒԱՆՑ ՀԱՆԳԻՍՏԻ

1 Տարի	2 Տարի	3 Տարի
Վարսակ	Սեւ ցորեն	Յորեն կամ հաճար

ԳՍՈՒԱՄՆԱՅ ՓՈԽՄՇԱԿՈՒՄ

1 Տարի	2 Տարի	3 Տարի
Ճակըդեղ	Վարսակ կամ Գարի	Առույտ կամ վիգ

4 Տարի

Յորեն աշնանացան

Արմատիքներէն առաջ ընդհանրապէս կը մշակեն ճակըդեղ, գետնախնձոր, կամ ուրիշ բոյսեր որք կրկնամշակուի կը պա- հանջեն, և այս կերպով կը ջնջեն մոլարոյ- սերը, կամ արուեստական մարգագետին մը կը կազմեն, որ մոլարոյսերը կը խեղդէ:

Խորարմատ բոյսերուն յաջորդելու են երեսկուկ արմատ ունեցող բոյսերը, օրինա- կի համար, ճակըդեղէն վերջ ցորեն մշա- կելու է:

Այն բոյսերուն, որք մասնաւորապէս ինչ ինչ տարրներ կը քաղեն հողէն, յաջոր- դելու են ա'յնպիսի բոյսեր որք ուրիշ տարր- ներ կը քաղեն՝ Այսպէս, արմատիքներէն (ցորեն կամ հաճար) վերջ որք շատ ազօղ (բորակածին) կ'սպասեն, մշակելու է առ- ուոյտ որ բօղասէ կ'ախորժի և կամ կանճակ (colza, տեսակ մը կաղամբ) որ փոսփորային թթու կը սիրէ:

Երբեմն ալ փոխմշակութեանց մէջ կը մշակեն այնպիսի բոյսեր որք շատ չուտ ա- ճելով՝ մէկ կամ երկու ամիս միայն կը գրա-ւեն հողը երկու ուրիշ տեսակ մշակու- թեանց միջեւ, ինչպէս կանաչ կանաչ հըն-

ձուռելու սահմանուած եգիպտացորեն — խոտը :

ԾԱՆՈԹ.—Արտերուն հանգիստ տալու խնդիրը շատ վիճարանութիւններ յարուցած է, մասնաւորապէս անցեալ դարուն սկիզբը: Հանգիստի կուսակիցը կ'ըսէին թէ հոգին արտադրելով կը յոգնի, եւ թէ մեզ նման պէտք ունի աշխատութենէ վերջ հանգստանալու: Արդարեւ, գործնականին մէջ դիտած էին թէ հանգստած արտ մը լաւագոյն հունձը կուտար քան երբ յաջորդաբար ցանուէր, մասնաւորապէս միւսնոյն բոյսով, եւ այս արդիւնքը կը վերագրէին հոգին կարծեցեալ հանգիստին...

Սակայն հոգին ինքն իսկ հոգ կը տանի ապացուցանելու մեզ թէ երբեք չի հանգստանար, եւ թէ հետեւապէս պէտք չունի այն հանգիստին զոր կ'ըսէինք բացարձակապէս կրել տալ անոր: Եթէ չի տար հունձքեր, զորս կը զլանանք անոր վստահիլ, ուրիշ բան կուտայ. հո'ս խոտ, հո'ս ցախ, այլուր փուշեր, մորենի, մամուռ, քարաքոս [lichen], պտեր, սուսկ եւլն: Քիչ բան է այդ, պիտի ըսուի, բայց վերջապէս հոգին հանգիստ չառնէր, միշտ կ'արտադրէ: Արդ, ո՛չ թէ հանգստութեան պէտք ունենալուն համար է որ երբեմն մշակները հանգիստ կուտան արտերուն, այլ որովհետեւ չեն կրնար անոր վերադարձել զէթ մէկ մասն այն տարրերուն զորս առատօրէն շուայած էր հոգին իր տուած հունձքերուն: Եթէ դրամագլուխ չունինք, եթէ մեր տրամադրութեան տակ եղածն անբաւական է այն հոգի տարածութեան համար զոր պիտի մշակենք, ուզենք չուզենք պիտի պարտաւորինք հանգիստ տալ մեր արտերուն, ո՛չ թէ հոգը հանգստանալու համար, այլ որովհետեւ չենք կարող անոր ետ տալ իր սպառած տարրերը, որպէս զի կարող ըլլայ շահով արտադրել ինչ որ իրմէ կը խնդրենք: Ուրեմն արտերուն հանգիստ տալու խնդիրը մշակին նիւթական միջոցներուն սահմանին մէջ պարփակուած է:

ՀՈԳԻՆ ՊԱՏԻՍՏԱՌԻԹԻՒՆԵՐ

ՄՇԱԿԱԿԱՆ ԳՈՒԾԻՆԵՐ ԵՒ ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ո՛րքան ալ հարուստ ըլլայ հոգը, պէտք է մշակել, արօրադրել զայն, որպէս զի կարենայ արտադրել: Հոգին մշակութիւնը կը նպաստաւորէ անոր կազմաւորիչ տարրերուն բաղադրութիւնները. ջերմութեան եւ լուսոյ ազդեցութեան կ'օգնէ, կը քրքրէ հոգը, և շփին ու ջուրին թոյլ կուտայ թափանցել մինչեւ արմատները. վերջապէս կը ջնջէ մոլաբոյսերը:

Մարդիկ հոգը կը մշակեն գործիքներով և մեքենաներով:

Գործիք (outil) կը կոչուին մասնաւորապէս ձեռքով գործածուածները, մինչդեռ

մեքենաները շարժման մէջ կը դրուին անասնոց ուժով կամ շողիով, մարդուն տնօրէնութեան տակ:

Մշակական գործիքներն երկու տեսակ են. 1. Անոնք որ հոգը փորելու, քրքրելու կը ծառայեն. 2. Անոնք որ հոգը կակղելու քրքրելու կը գործածուին: Առաջիններով հոգը կը բրին, կը փորեն, վերջիններով կը տարածեն, կը հարթեն զայն, սերմն ընդունելու ամէնէն պատշաճ եղանակաւ:

Հոգը փորելու սահմանուած գլխաւոր գործիքներն են բաիք (bêche) և բրիչը (pioche), որք ամէն ձեւերով կ'ըլլան, ամէն երկրի հողագործներուն սովորութեանց համաձայն: Հոգը կակղելու, քրքրելու համար գործածուած ամէնէն սովորական գործիքներն են տրուսը (փոցղ, rateau) և լողաւը (rouleau):

Ա Ր Օ Ր

Հոգը փորելու և քրքրելու ծառայող գլխաւոր մեքենան է արօրը (charrue, սապան) որ մշակական գործիքներուն առաջինն է: Իր այլազան ձեւերուն տակ, արօրը ծանօթ է անյիշատակ ժամանակներէ ի վեր:

Ի սկզբան արօրն անիւ չունէր, ինչպէս է տակաւին Անատոլիոյ մէջ. բայց յետոյ առաջակողմ մը ունեցաւ երկու անիւներով: Աւելի կամ պակաս բարեփոխուած այս տիպարին համաձայն, շատ տեսակ արօրներ հնարուած են Եւրոպոյ մէջ, սակայն վաղնջական արօրը դեռ իր նախնական ձեւը կը պահէ ասիական երկիրներու մէջ: Արօրին գլխաւոր մասերն են հողահեծ դանակը (coutre, տեսակ մը ձեւիչ որ հոգը կը կտրէ ուղղահայեաց), խովը (soc), երկաթէ ուրիշ տափակ դանակ մը նիզակաձեւ, որ հորիզոնաբար կը կտրէ, ականջը (versoir, առատամ), որ դանակին ու խովին կտրած հողի դուզձը կը շրջէ: Այս երեք գլխաւոր մասերը հաստատուած են իշուկի մը վրայ, երկու թեւերով վերջացած, որք ման (mancheron) կը կոչուին և արօրը վաւելու կը ծառայեն, Մաճէն բռնող արօրադիրը կը կոչուի մաճիւլ:

Պարզ արօրներով դժուարին է միշտ միւսնոյն կողմը շրջել հոգը, բան մը որ ան-

հրաժեշտ է, եթէ կ'ուզենք աղբը լաւ ծածկել և խողաններն ու մոլախոտերը օգտակարապէս թաղել, Կրկնախոտի արօրը (braban double) կը բաղկանայ երկու արօրներէ, որք միեւնոյն սոնակին վրայ կը դառնան տակէ տակ: Իւրաքանչիւր կողմը կը պարունակէ հողահերձ դանակ մը (ձեւիչ), խոտի մը և ականջ մը:

Այս գործիքին գործածութիւնը գիւրին է: Հողագործն երբ առաջին ակօսն աւարտած է, արօրին մարմինը կը դարձնէ: Խոտն ու ականջը (versoir) կը գտնուին ուղղաձիգ դիրքին մէջ, հողը միշտ միեւնոյն կողմը շրջելու համար:

Արօրը սովորաբար կը քաշեն զոյգ մը ընտանի անասուններ, ինչպէս եզ, ձի, ջորի և ըն: Կան նաև արօրներ որք չափոյ ազդեցութեամբ կը գործեն, բայց անոնց գործածութիւնը դեռ չէ տարածուած:

Յախնը (herse, մանկեռ) որ կը ծառայէ հողին մակերեսոյթը քրքրելու և հարթելու, իրապէս ծանր ու խոշոր եռանկիւնի տրամուխ մ'է: Նաեւ մոլաբոյսերը ջնջելու և փոքրիկ հունտերը թաղելու կը ծառայէ:

Լողբարերն (rouleau) երկու տեսակ են 1, փայտեայ կամ ձուլածոյ լողբարեր, միահարթ մակերեսոյթով, որք սերմանումէ վերջ հողը նստեցնելու կը ծառայեն: 2. Կմախածեւ լողբարեր, որք հողի գուլձերը փշրելու կը ծառայեն:

Երկրորդական գործիքներ են խլիշը (extirpateur), մարկելը (houe, բրիչ, դադմա) և այլն, որք ցաքանէն կ'ամ արօրէն ածանցեալ մասեր են:

ԱՐՕՐԱԴՐՈՒԹԻՒՆ, ՀԵՐԿ

Ու է եղանակի մէջ կրնանք հերկել, ամէն անգամ որ օգը թոյլատրէ. բայց առիկա բացարձակապէս ճշմարիտ է այն հողերուն համար միայն որք թեթեւ ու թափանցելի են: Արդարեւ, եթէ զօրաւոր ու հոծ հողերը հերկենք՝ երբ չափազանց խոնաւ են, արօրին կը փակչին, բան մը որ աշխատութիւնը պիտի դժուարացնէ, և և կ'ամ չորնալով կարծր գուլձերու պիտի փոխուին, քարի պէս զիմացկուն, որոց վրայ ցաքանը ու է ազդեցութիւն պիտի չունենայ:

Նայ, Ասկէ սա պիտի հետեւէր թէ հողն ըստ բաւականի պիտի չքրքուէր, սերմնացանութեան պահանջած յարմար պայմանները ներկայացնելու համար:

Հունձքը վերցնելէ անմիջապէս վերջ, միշտ օգտակար է հերկել, վասն զի այս կերպով բոյսերուն ցօղուններն ու խողանները կը թաղուին, և հողին մէջ օգտակար պարարտութեան մը կը վերածուին:

Ճարտար հողագործ մը միշտ հոգ կը տանի որ արօրին վերցուցած հողը աղէկ մը շրջի, մոլաբոյսերը ու աղբերը ծածկելու համար: Պէտք չէ բոլորովին դարձնել զայն, այլ միայն պառկեցնել նախորդ գուլձին եզերքին վրայ: Այսպէս գործելով, կը դիւրացնենք ցաքանին աշխատութիւնը, որ աւելի դիւրաւ պիտի պատուէ գուլձերը եւ վերնահողին հետ պիտի խառնէ ներքնահողին բեկորները զորս արօրը վեր հանած էր:

Շարունակելի

ՔԻՉ ՍԸ ԽՆԴՈՒՔ

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

Ֆրանսացի դրոշմաժառու մը նոր ալպօմ մը տպագրել տալով՝ հետեւեալ յայտարարութիւնը կ'ընէ լրագրաց մէջ.

«Փառակազմ ալպօմ դրոշմաթուղթերու, 1900 թուականին համար, Գիմն է 30 ֆրանկ. բայց պէ՛տ է զիմնալ քէ կը պարունակէ իր մէջ Մոլթալիոյ հազուագիւտ դրոշմաթուղթերը, որոնց վաւերականութիւնը կ'աւանդուի Երաւարտութեան Կոմիտէին:»

Մոլտալիոյ դրոշմաթուղթերը, որոնց վրայ կ'ովի գլուխ մը նկարուած է, խիստ հազուագիւտ են, և շատ աւազմներու մէջ կը պակսին, որով ամէն երկրէ բաղաժիւղ դրոշմահաւաքներ կ'աճապարեն այս տեսակնալ առիթէն օգտու քաղել, և մէյմէկ մանսալ-բոսդ շրջելով յիշեալ վաճառականին

շուտընդփոխութիւնստանան իրենց փափաքածը :

Բայց ի՞նչ տեսնեն աղէկ, Մոլտավիոյ դրոշմաթուղթերուն տեղ, մէկմէկ մանր ապակիներ դրուած էին, որոնց մէջ որոշակի կը տեսնուէր դիտողին դէմքը :

* * *

Դրոշմաթուղթ հաւաքող վարպետորդի մը շատ մը բուլեր կը գնէ ծանօթ դրոշմա-վաճառէ մը, և իբր փոխարինութիւն՝ անոր կը կլնեցնէ կեղծ հինգ Փրանքնոց մը :

Բայց վարպետորդին ուրախութիւնը իր փորը կը մնայ, երբ ուրիշ դրոշմաւաճառէ մը կը տեղեկանայ թէ իր գնած բոլոր դրոշմաթուղթերը կեղծուած են : Անմիջապէս կը վազէ դանոնք ծախողին վաճառատունը և կը գոչէ :

— Պարո՛ն, այս ըրածնիդ վայելք ունի՞. ինծի ծախած բուլերնիդ բոլորն ալ կեղծ են եղեր :

— Ներեցէք, բարեկամ, նախ դուք սա կեղծ հինգ Փրանքնոցը փոխեցէք և յետոյ կը տեսնուինք ձեզ հետ :

— Իմ տուած հինգ Փրանքնոցս կեղծ չէր :

— Սուտ կը խօսիք կոր, բացէ իմաց կեղծ է այն, ամբողջովին կապար է :

— Բուլերուն վրայ խօսինք. ինչո՞ւ կեղծ բուլ ծախեցիք ինծի :

— Մենք կեղծ բուլ չենք ծախեր :

— Ընդհակառակը, բացարձակ կեղծող էք եղեր :

— Կեղծողը դուք էք :

— Ե՛ս եմ մի, խաբեբա՛յ :

— Անգղա՛մ, խարդա՛խ :

Այս միջոցին բարեկամ մը վրայ կը հասնի :

— Ի՞նչ կուի է այդ, պարոններ :

— Ինծի կեղծ հինգ Փրանքնոց մը քնեց :

— Ինծի կեղծ բուլեր ծախեց :

— Ուրեմն երկուքդ ալ կուեւրու իրաւունք չունիք. դուք ետ կ'առնէք բուլերը, դուք ալ ետ կ'առնէք հինգ Փրանքնոցը, կը լմննայ կ'երթայ :

— Է՛յ, ատկէ ի՞նչ կը շահինք :

— Իրաւ է թէ բան մը չէք շահիր, մի-

այն ես շահած կ'ըլլամ քանի որ երկուք-նուդ ալ կեղծող ըլլալը հասկըցայ :

* * *

— Պարո՛ն հրամանքնիդ բուլ կը գնէք եղեր, ես տունը դարանիս մէջ 1000 հատի չափ ունիմ, ըսէ՛ք թէ քանի՞ կ'առնէք :

— Հի՞ն բուլեր են :

— Այո՛, շատ հին :

— Ո՞րչափ :

— Շիտակը լաւ մը չեմ գիտեր, բայց քրհեղեղէն առաջ ըլլալու են :

* * *

Տասն տարեկան աղայ մը առաւօտ մը կ'սկսի բարձրաձայն լալ :

Մայրը վրայ հասնելով՝ կը հարցնէ.

— Զաւակս, ինչո՞ւ կուլաս կոր :

— Մայրիկ, մուկերը...

— Է՛յ, ի՞նչ է եղեր :

— Բոլորը կրծեր հատցուցեր են :

— Ծո՛ւ ի՞նչ բան :

— Դարանին մէջի բուլերս :

— Վա՛յ մեղքիս, ես ալ վախցայ որ բոս-րայիս տուփին համար կ'ընես կոր :

* * *

Ծայրայեղ դրոշմասէր երիտասարդ մը, կէս կատակ կէս իրաւ, հետեւեալ տողերը կը զրկէ իր զրացիներէն գեղեցիկ օրիորդի մը.

Օրիորդ Բուբուլ,

Թէ տաս ինձ բուլ,

Սիրոյդ փոխան

Չեմ մնար խուլ :

Օրիորդն աւելի նրբամիտ և խորամանկ, հետեւեալը կ'աւելցնէ այդ տողերուն տակ, և ետ կը դարձնէ կատակող պարոնին.

Սէրդ է շատ թուլ

Մինչ սիրես բուլ :

Այդ տեսակ սէր

Չի տրուիր կուլ :

Լ Ե Ջ ՈՒ Ա Ւ Տ

Արդարեւ, աստուծոյ շատ կային եւ կան, ինչպէս ջլախտ, թոքախտ, մորթախտ եւն. անցեալ օրեր հրապարակ ելաւ Մուշեղ վարդապետի կրօնքի հիւժախտէն զատ Ռ. Որբերեանի Լեզուախտն ևս, Արեւելքի ներկայ տարւոյ Յունուարի թիւերէն մէկուն մէջ:

Մեր դժբախտութենէն անտարբեր տակաւ կը շատնան եւ գրէթէ տարափոխիկ են. շուտով կը վարակուին ո՛չ սիայն մօտաւորները՝ այլեւ հեռաւորները: Այս մասին չկան բնաւ զգուշական միջոցներ: Հետեւապէս, Փիզիքական աստուծոյն աւելի վնասակար են կրօնական—լեզուական աստուծոյնը:

Յնդիր է թէ կրօնական հիւժախտի վարդապետութիւնն լեզուախտէն ծնած է, թէ լեզուախտն հիւժախտի վարդապետութենէն: Ինչպէս կ'ուզեն թո՛ղ հասկնան ընթերցողները, միեւնոյն բանն է, ինչպէս կ'ըսեն շատ տեղաւոր—Հաւկիթը հաւեց ելած է քէ հաւը հաւկիթէն—: Բայց հաւանական կը թուի ըսել թէ լեզուախտէն կը ծնին շատ աստուծոյն, ինչպէս կրօնքի հիւժախտի վարդապետութիւնը: Լեզուախտի ենթակաները տեսակ մը ըմբիշներ կամ լարախաղացներ են, որք ձայն կուտան իրարու. —Ե՛լ փէհ—լիվան դարտաշ, քեղ տեսնեմ— Անշուշտ այսպէս աստուծոյն ծնած է Մուշեղ վարդապետի փեհլիվան գարսաց Որբերեան էֆէնտի: Եւ միթէ գօտեմարտութիւն չէ՞, ի ջատագովութիւն Մուշեղ վարդապետի, ջատագով հանդիսանալ նաեւ Արիոսի, Մակեդոնի, Եւտիքէսի, և զանոնք մեզով բարձր դասել հայ եկեղեցականներէն: Ո՛վ լեզուախտ, ինչքան բաղմարեղուն ես եւ ինչե՛ր կարող ես ծնանիլ:

Մեր փորձառու մամիկները, երբ կը տեսնէին թէ տղեկները զգեցեալ բառ կ'արտասանեն, կ'ըսէին. «Լեզուդ կը տաղեմ հա՛ւ»։ Երանի՛ թէ Որբերեանի մայրն ալ զգուշացուցած ըլլար զինքը մանկութեան ժամանակ. բայց թերեւս չուտով մեռած է և անոր համար աղան կարելի է Որբերեան կոչուած եւ լեզուախտաւոր եղած է: Տարա-

կոյս չկայ որ մեր երանելի պառաւանջ սոյն պարզ սպառնալից ներքեւ ծածկուած կ'ըլլայ մայրական խիստ գնահատելի զգուշաւորութիւն մը, որով կը փափաքին իրենց անմեղ մանկանց անմեղունակ սիրտն ու լեզուն իսպառ հեռու պահել տգեղ ու տխրեղ խօսքերէ, անշուշտ յօգուտ անոնց ապագային՝ հասուն կատարելութեան:

Հստ ամենայնի փափաքելի է որ մեր կրօն. ժողովը, զոնէ երբեմն, սոյնօրինակ մայրական եւ մանաւանդ հայրական հոգածութիւն ունենայ գէթ նորարոյս հրապարակագիր վարդապետաց համար: Իսկ Իզմիրի Որբերեանի մասին սոյն պարտաւորութիւնը տեղւոյն հոգալաւոր Առաջնորդի բաժինն է: Բայց մենք առ այժմ Որբերեանի այդ աստուծոյ խարելու կամ բուժելու համար դարման մը պիտի յանձնարարենք:

Ինք կը խոստովանի անշուշտ թէ Գատը գիւղի Տ. Վռամշապուհ քահանայն (այժմ ի Բարիզ) կրօնքի հիւժախտաւորներէն չէ, եւ այնքան բարի դատուած է որ իրեն (Որբերեանի հիւանդութեան ժամանակ ի Գատը գիւղ) 200 դրշէն աւելի ծախք ըրած է բժշկի և դեղօրէից համար: Արդ կը հարցնենք թէ ինչո՞ւ այդ քահանային ունեցած պարտքն զլացած է վճարելու, մինչդեռ ինքն 30—40 մէծիտ ամսականով ուսուցիչ ընդունուած է Իզմիրի վարժարանաց մէջ: Ինչո՞ւ պատասխանած չէ բաղմալարօտ քահանային վեցէն աւելի գրած գրերուն, թէ՛ ապահովագրեալ եւ թէ ուրիշներու միջոցաւ: Գատըգեղցիներէն շատերուն ծանօթ է այս տխուր իրողութիւն:

Կը յուսանք թէ ներկայս խարան մը կ'ըլլայ Որբերեան էֆ. ի լեզուախտին որ ըմբիշի սնախօսութեամբ հրապարակ կը նետուի՝ ժամուցով ապրող խեղճ եկեղեցականներն Արիոսէն, Մակեդոնէն, Եւտիքէսէն աւելի վնասակար հոգալիւր:

Անկողմնակալութեամբ հրատարակեցինք գաւառացի պարկեճ եկեղեցականի մը սոյն գրուածը. սլարկեճ, այո՛, երբ միակն է որ կը բողոքէ այսպէս ապերասան բերաններու դէմ:

Ծ. Խ.

THE HISTORY OF THE

1713

The first part of the history of the
the second part of the history of the
the third part of the history of the

THE HISTORY OF THE

1713

The first part of the history of the
the second part of the history of the
the third part of the history of the

THE HISTORY OF THE

1713

The first part of the history of the
the second part of the history of the
the third part of the history of the

The first part of the history of the
the second part of the history of the
the third part of the history of the

THE HISTORY OF THE

The first part of the history of the
the second part of the history of the
the third part of the history of the

ԳՐՊԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրու

800 փոքրադիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ունեւորու եւ բնական ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան բնկերը: Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զաւկին ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը: 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 գեղջ: Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնօրէնութեան:

Պատկերազարդ Աշխարհագրութիւն

ՊՕԶԱՃԵԱՆ

Գին 4 Ղրու

Լոյս տեսաւ Ն. Պերպլերեան մամուր տպագրութեամբ, քաղ. վերջին փոփոխութեանց եւ Կրթական ծրագրին համաձայն. Մայրաքաղաքիս Կ'ն կարեւոր դպրոցներն անմիջապէս բնորոնեցին զայն իրենց դասագրոց ցանկին մէջ:

Փնտեցե՛ք 1900ի տպագրուածը, որ 208 էջերէ կը բաղկանայ, եւ իր պարունակած պատմական, գիտական, առեւտրական եւ ցեղային ծանօթութիւններով, աշխարհագրութեան Ա. դասագիրքը կը հանդիսանայ եւ արժանի է ամէն ուսուցչի ուշադրութեան:

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կը հայրայթէ մեծաքանակ 30 առ 100 գեղջով:

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ԴԵՂՕՐԷԻՑ

Կրէկուառ ՂազարօՅ եւ Ընկ.

Պատիւ ունինք ծանուցանել թէ վաճառատունս փոխադրուած է Սասքգիէ խան թիւ 1 եւ 2: Եւրոպիոյ բոլոր կեդրոններուն հետ իր ունեցած յարաբերութեանց շնորհիւ, բարձր դերու անհուն պէտքիսութիւն մը միշտ պատրաստ ունի մեծաքանակ, ինչպէս նաեւ քիչքերական համբաւ վայելող Եւրոպացի բժիշկներու մասնագիտական պատրաստ դեղերը ու ամէն տեսակ հանգային ջուրերը: Գաւառներէ եղած յանձնարարութիւնք մեղի ու փութով կը կատարուին, անմեղելի կերպիւ ածան գներով:

Դիմեցե՛ք եւ պիտի համոզուիք:

ԿԱՌԵԻՈՐ ԱԶԴ.— Հանրագիտակի կողքին երեք էջերը ծանուցմանց յատկացուած են: Անոնք որ կը հաճին մէկ տարեկան բաժանորդագրուիլ, կրնան իրենց ծանուցումները ԶՐԻ հրատարակել տալ, 10 ական տող, 5 անգամուան համար. իսկ 50 տող մէկ անգամուան համար:

Բաժանորդագրութիւնք կ'ընդունուին, եռամսեայ, վեցամսեայ և տարեկան:

ՄԵՐ ՀԱՍՏԷՆ

«Հանրագիտակ»ի վերաբերեալ ամէն գրութիւն պէ՛տ է ուղղել Նշան Պերպլերեան տպարանը, Էսփի զապթիյէ մասսէսի թիւ 61, առ Տնօրէնութիւն եւ Խմբագրութիւն «Հանրագիտակ»ի